# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<28>> 5 ապրիլ 2018թ. N 58

ք. Արմավիր

### *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ ՄԱՐՏԻ 31-Ի N71 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, <<Տրանսպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N762 որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականի մարտի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ներմարզային ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների սպասարկումը մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված կազմակերպությանը հատկացնելու մասին>> N71 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
    1) Որոշման 2-րդ կետում <<4 (չորս) տարի ժամկետով>> բառերը փոխարինել <<անորոշ ժամկետով՝ մինչև սահմանված կարգով նոր մրցույթի կայացումը:>> բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ՄԱՐԶՊԵՏ՝* *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*